600.0437.28.12.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

28 դեկտեմբերի 2016 թվականի №437Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի №5Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածների 1-ին մասերը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված կարգը, կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետը և հաշվի առնելով «ԱՐԵՎ ԵՎ ՋՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2016 թվականի հոկտեմբերի 28-ի հայտը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի հունվարի 22-ի «ԱՐԵՎ ԵՎ ՋՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Քաջարանց» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №5Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) «ԱՐԵՎ ԵՎ ՋՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0532 լիցենզիայով (այսուհետ՝ №0532 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը 2 տարով՝ որոշման մեջ «մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերը փոխարինելով «մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերով:

2. «ԱՐԵՎ ԵՎ ՋՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ №0532 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Քաջարանց» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) մեկամսյա ժամկետում «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2013 թվականի դեկտեմբերի 6-ի №35/88 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված №C-08/7 երաշխիքի համաձայն երաշխավորված յոթ միլիոն յոթ հարյուր երկու հազար հինգ հարյուր դրամ գումարից երեք միլիոն ութ հարյուր հիսունմեկ հազար երկու հարյուր հիսուն դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել յոթ միլիոն յոթ հարյուր երկու հազար հինգ հարյուր դրամ գումարի նոր երաշխիք՝ մինչև 2019 թվականի փետրվարի 14-ը գործողության ժամկետով:

3. Որոշման 2-րդ կետով հաստատված №0532 լիցենզիայի պայմանների՝

1) 9-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

2) 32-րդ և 34-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«32. Լիցենզավորված անձը պարտավոր է մինչև լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածի ավարտը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտը հավաստող՝ հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և շուկայի կանոններով սահմանված կարգով էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի մտադրության դեպքում՝ սակագնի սահմանման հայտ:»:

«34. Լիցենզիայի 6-րդ կետում նշված հզորության մասնակի տեղադրման դեպքում Լիցենզավորված անձն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել այդ մասով փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտը հավաստող՝ հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և շուկայի կանոններով սահմանված կարգով էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի մտադրության դեպքում՝ սակագնի սահմանման հայտ:»:

4. «ԱՐԵՎ ԵՎ ՋՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի դեկտեմբերի 31-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
28 դեկտեմբերի 2016թ.